


37

U-52

1 MAR 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

U-52



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Թարգմանություն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Հրատարակություն
ՄԱՏԻՆԵԱՆՑ ՍԻՄԵՐՆԻ

ԹԻՓԻՍ — 1918
Հարգանքով Հ. Ի. Կարապետյան

37
U-52

08.02.2013

99952

37
0-52

PA
34384

Հրատարակիչ Մատինեանց յարգելի Սի-
մէօնի անունով ներկայ գրքոյկից ՀԱԶԱՐ օ-
րինակ նուէր տրուեց ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻ-
ՈՒԹԵԱՆ բաժանելու հայ աշակերտ-աշա-
կերտունիներին:

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է

Էդմօնդօ դէ Ամիշիսի «Նիրտ» գրքից «Աշա-
կերտի յիշատակարանը» 30 պատկերով. թարգմա-
նութիւն գերմաներէնից: Նոյն գրքից մենք արդէն
թարգմանած և հրատարակած ունենք «Ինն ամսօրեայ
պատմութիւնները» և «Ժնողների նամակները որդուն»
առանձին գրքոյկներով:

Քամալեանց Ս.

1.

ՏՈՒՐԻՆՈՒՄ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԵՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ
ՏԱՐԲԱԿԱՆ ԳՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏ—ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ
ՈՒՂՂԱԾ ԽՕՍԻԸ.

Մի քանի դար կը լինի, ինչ բոլոր երկրների ու ժողո-
վուրդների մանուկներին ամենայն տարի, տանը թէ դպրո-
ցում մի գլուխ ասում են—ուսէ՛ք, երեխէ՛ք, քարի եղէ՛ք:

Այս բանը երգի անվերջ, անլուրի կրկնակի պէս հըն-
չուել է ձեր ականջների տակ այն օրից, երբ սկսել է ձեր
խելքը բան կտրել:

Սակայն միթէ էլ ուրիշ աւելի լաւ բացայայտող բա-
ռեր չըկան, թէ ի՞նչ պիտի անէք ձեր օգտի համար կամ
թէ համայն աշխարհն ի՞նչ պահանջ ունի ձեզնից
ընդհանուր բարեկեցութեան համար: Հէնց ասում են ձեզ—
ուսէ՛ք, ի՞նչ է սրա պատճառը:

Ասեմ ձեզ թէ ի՞նչու են ասում: Նրա համար են ասում,
երեխէք, որովհետեւ ձեր հասակի պէս բաղդաւոր ու բեղմնաւոր
հասակ չըկայ: Դա այն հասակն է, երբ ընդունակութեան
դռները բացում են առաջին անգամ, երբ լսածը շատ հեշտ
ու հանգիստ հասնում է մինչև հոգու խորքը ու խելքին
մատչելի եղածը տպւում այնտեղ: Չեղ ասում են, ուսէ՛ք,
որովհետեւ այդ տարիքում դուք կարող էք աւելի արագ
ըմբռնել, կամ յիշողութիւնը սրելով, զօրացնելով հմտութիւն
ձեռ բերել, ձեր մտքերն առանց մեծ ձիգ գործ դնելու բա-
ցատրել, մինչդեռ յետոյ կամքի շատ ուժ հարկաւոր կըլինէր
նոյն արդիւնքներին հասնելու համար:

Ուսէ՛ք, ասում են ձեզ, որովհետեւ բոլոր գիտելիքները,
որ այժմ ունէք ձեր յիշողութեան մէջ, կազմում են հիմնածը—
կանվան, որի վրայով դուք պիտի անցկացնէք նոր գիտե-

լիքներ, համութիւնների թելերը: Լաւ հասկացէք, եթէ այդ հինաժը թոյլ ու խաշար է, ձեր գիտելիքների թելերն էլ թոյլ կրլինեն: Յայտնի է, որ մանկութեան միջոցին դէպի դպրոցը ջերմ ու ցնծուն սէր ունեցողը, առանձին խանդով ու եռանդով է սովորում պատանեկութեան ժամանակ, դրա հետեանքը ընտւմ է այն, որ հասուն տարիքում դառնում է գիտութեան երկրպագու:

Ասում են՝ ուսէ՛ք, դարձեալ նրա համար, որովհետեւ ձեր այդ մատաղ տարիքը, որոնք էլ վերադառնալու չեն, որոշում են ձեր ապագան, որովհետեւ կեանքը ասուածն էլ նոյն բանն է, ինչ որ ձեր դպրոցը, միայն նա աւելի լայնածաւալ է, իսկ մարդս սովորաբար շարունակում է ուղին այն քայլով, ինչպէս որ սկսել է:

Ձեզ ասում են՝ ուսէ՛ք, վերջապէս դարձեալ նրա համար, որովհետեւ ձեր այդ առաջին գիտութիւնը, որի նշանակութիւնը դեռ չէք ըմբռնում, տալիս է ձեր ընթերցանութիւնների մէջ առաջին տպաւորութիւնները, մտքի առաջին բարի ծիւրերը, կամքի առաջին յաղթութիւնները, որոնք մանուկներից կերտելով պատրաստում են կարգին բանուորներ, օգտաւէտ պաշտօնեաներ, դաստիարակիչ հայրեր, մեծաբանքար մտածողներ, օրինակելի և օգտակար քաղաքացիներ:

Ճիշտ այսպէս են այն փոքրիկ, ցիրուցան սերմերը, որոնք գրեթէ կորած են հողի ծոցում ու մեր աչքերի համար աննշմարելի, բայց մէկ էլ տեսնում ենք ոսկեղէն հասկերով զարդարում են դաշտերը և ազգերին հարստացնում:

Ահա թէ ինչո՞ւ շարունակ կրկնում ենք—ո՛ւսէ՛ք: Բայց մենք ձեզ նոյնպէս ասում ենք—բարի եղէ՛ք: Ինչո՞ւ: Ասեմ այս լուպէիս: Նրա համար ենք ասում, երեսէք, որովհետեւ մտաւոր զարգացումը առանց հոգու բարութեան, նման է մի գեղեցիկ պտտմունձանի, ձգած անձնապաշտութեան և գոռոզութեան թիկունքին, նա մեծած առարկայ է թանկարան-

ների միջի փայլուն դէնք ու զրահի պէս, որոնք չունեն ասպետի ոչ մարմինը և ոչ հոգին:

Մեր ժամանակի նշանաւոր մատենագիրներից մինը, յիշելով իրա երկարամեայ կեանքը, 84 տարիների ընթացքում, միառմի տուեց կայսրների, թագաւորների, հանճարեղ պետական անձերի, գիտնականների, զօրապետների, գեղագէտների, բանուորների, զանազան դասի ու ազգի մարդկանց անունները, որոնք եղել էին իրա մօտ և դուրս բերեց այսպիսի եզրակացութիւն իրրե իրա իմաստութեան կտակ, «կեանքիս ընթացքում բոլոր այս մարդկանց տեսնելով, հասկացայ, որ այս աշխարհում գոյութիւն ունի միայն մի բան, որի առջև պիտի գլուխ խոնարհենք—այդ հանճարն է, և միայն մի զգացմունք, որի առջև բոլորս պիտի ծունկ չոքենք—այդ բարութիւնն է»: Նա այս խօսքերն ասեց իրա մահից քիչ առաջ, այն վայրկեանին, երբ մարդ զոգում է, որ զուտ ճշմարտութիւն է ասում: Այդ հանճարաւոր մարդը բարութիւնը գերադասեց հանճարից, որովհետեւ սրտի առաքինութիւնների ու խելքի մէջ բարութիւնն այն է, ինչ որ մոլորակների մէջ արեգակը, որ լուսաւորում ու ջերմացնում է նրանց, որովհետեւ բարութիւնն ասածդ որ կայ, մի գօրութիւն է, սիրալիրութիւն է, գթասրտութիւն է, մխիթարանք է, ներումն է, մայր է ամենայն արդարութեան, անձնուիրութեան և քաջութեան, որովհետեւ ճշմարիտ քաջութիւնը բնակալում է ազնիւ հոգու մէջ, իսկ հոգու ազնւութիւն կարող է ունենալ միայն բարի մարդը:

Ահա թէ ինչո՞ւ կրկնում ենք ձեզ—բարի եղէ՛ք, թէպէտ խոստովանում էլ ենք, որ ձեր միջի յառաջագէմներն անգամ դեռ չեն կարող լիովին հասկանալ մանկական բարութեամբ ստեղծուած մեծագոյն բարիքը, Բայց լսէ՛ք, թէ ի՞նչ հետեանքներ է տալիս ձեր բարութիւնը: Ձեր բարութիւնն է պատճառը, որ ձեր ուսուցիչը դառն աւանդում է խաղաղ հոգով, որ ձեք հայրն աշխատում է ուրախ սրտով:

որ ձեր մայրն իրա պարտականութիւնները կատարում է ժպիտն երեսին, անհոգ երգելով: Ձեր բարութիւնն է պատճառը, որ ձեր ծնողներն ընտանեկան նեղութիւններն ու վշտերը կը բռնեն հանգիստ ու անվրդով և նրանք, որ ձեզ անհուն սիրել են, վերջին «մնաք բարեւ»-ը ձեզ ասելիս թախծից չեն տանջուում, հաստատ գիտեն, որ նրանց զաւակները որբ մնալով, եթէ բաղդաւոր չըլինեն, գոնէ կըսիրուեն բոլորից, որովհետեւ նրանք բարի կըլինեն: Ձեր բարութիւնը դպրոցի հպարտութիւնն ու գեղեցկութիւնն է, ընտանեկան օջաղի համն ու ժպիտն է, կեանքի ու մահուան օրհնութիւն է նրանց համար, որոնք աշխատում ու տանջուում են ձեր պատճառով:

Սրա համար է, որ հազար անգամ կրկնում ենք ձեզ — երեխէք, ո՛ւսէք եւ բարի եղէք:

Այդ բանը կրկնում ենք դարձեալ նրա համար, որ ինքնեւս յիշելով մեր մանկութեան երջանիկ տարիքը, դրա հետ յիշում ենք նոյնպէս մեր կորցրած թանկագին ժամանակը, յիշում ենք թէ ի՞նչ ապերախտ էինք վարւում բարի ուսուցչի հետ կամ ի՞նչ քարամիրտ էինք վերաբերւում դէպի չքաւոր ընկերները, յիշում ենք, որ մեր անփութութեամբ, անհնազանդութեամբ, անգթութեամբ լացացնում ու ամաչեցնում էինք մեր մօրը, դեռ այժմ էլ, երկար տարիներէից յետոյ, անշափ վշտերի ու հոգսերի մէջ մտաբերելիս, մեր հոգիքը կսկծում են, կարծես սուր է մխում մեր սրտի մէջ, ուստի ցանկանում ենք, որ մեր զաւակների սիրտն այդ կսկծը չը ճաշակի: Մենք առանձնապէս ձեր ուշքը դարձնում ենք աշխատանքի և հոգու ընթացքին վրայ, ոչ թէ այն պատճառով, որ դա մարդկային առաջին պարտականութիւնն է կամ թէ աչքի առաջ ունենք ձեր ընտանիքի ու մարդկութեան բարիքը կամ թէ այն պատճառով, որ բարութիւնն ու աշխատանքը բախտաւորութեան մղիչներն են, ոչ ամենեւին, այլ աւելի այն պատճառով, որ ձեր կեանքն անցնի առանց խղճի խայթի, որ դուք

երջանիկ լինէք, որ գոհ մնաք ձեր խղճից, որ ուրախ սրտով աշխատէք, որ անվրդով համբերէք ամեն ճախրողութեան և վերջապէս դուք աւելի յարգանք ու սէր վաստակէք, քան թէ մենք: Այո, կամենում ենք, որ դուք հասակ առնելով լինէք աւելի բարի, աւելի արդար, աւելի խելօք, քան թէ մենք ենք: Ահա թէ ի՞նչու ձեր զստիարակութեան խնդիրը կազմում է մեր ամենասուրբ պարտականութիւնը, իսկ ձեր ապագան — մեր յոյսերի ամենասրբագոյնը:

Ուստի թոյլ տուէք, երեխէք, որ անդադար կրկնենք այն խորհուրդները, որոնք անդրադառնում են մեր սրտերի մէջ իբրեւ արձագանք մեր հեռաւոր մանկութեան. այդ խորհուրդները բարիք են բերում նաեւ մեզ, երբ նրանց հաղորդում ենք ձեզ: Ուսէք սիրալոյսով, պատուեցէք ձեր ծնողներին, սիրեցէք ձեր ուսուցիչներին, յարգեցէք դպրոցը, յարգեցէք աշխատանքը:

Ձեր սրտերի խորքում խեղդեցէք անձնական բաղդաւորութեան վրայ հիմնուած անմիտ և ստոր գոռոզութիւնը: Նախանձեցէք միայն վեհ հոգուն, գործ բռնեցէք միայն անկեղծ սրտերի հետ, ատելով ատեցէք պարապութիւնը, անձնապաշտութիւնը, ապականութիւնը և անիրաւութիւնը, ինչքան էլ նրանք բարձր կանգնած լինէին, ինչպիսի դիմակ էլ ունենային:

Այս մատաղ հասակից սկսեցէք հովանաւորել թոյլերին, բարեկամութիւն ցոյց տալ թշուառներին, սիրեցէք մէկ-մէկու եղբօր պէս, որովհետեւ դուք եռակի եղբայրներ էք. նախ դպրոցական ընտանիքում, յետոյ հայրենիքի մեծ ընտանիքում և ապա մարդկութեան ահաղին ընտանիքում, որին փարուելով պիտի ողջագութենք յոյսի ու սիրոյ համբոյրներով:

Ճաճանչագիդ բարձրացել է 20-րդ դարի արշալոյսը: Դա ձեր դարն է, երեխէք: Գնացէք նրա հանդէպ, որպէս յաղթանակ տանող անպարտելի բանակ: Մենք խորազգաց

արտով ուղեկցում ենք ձեզ անթիւ բարեմաղթութիւններով: Մեր փափազն է աւելի երկար ապրել, միայն նրա համար, որ զօրավիգ, պաշտպան լինենք ձեզ ձեր առաջին ձախորդութիւնների ու վշտերի մէջ և օրհնենք ձեր առաջին յաղթութիւնները: Մենք ցանկանում ենք դիմաւորել ձեր օգնութեամբ յաղթանակող քաղաքացիութեան դրօշակին և ձեզ յանձնել այն, որ փառաւորուած է մեր հայրերի հանճարով և սրբազործուած նրանց արիւնով:

Ուսէք, երեխէք եւ բարի նղէք:



2.

ՅՈՒՐԻՆԻ ԴԱՂԱԲԱՅՈՒՆ ԴՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՑՆԵՐԻՆ
ՈՒՂԱՆԻ ԽՈՍԻՐԸ

Դպրոցից ուրախ խմբով դուրս գալիս, ինչպէս այդ անում էք ամեն օր, չէք նկատում մի ուշադիր դիտողի, որ երբեմն փողոցում կանգնած լինելով, մօտենում է ձեզ, ականջ է դնում ձեր զրոյցներին և հետեւում ձեր խաղերին:

Դա մէկն է այն խելօք ու գիտուն ճամբորդներից, որոնք քաղաքն ու նրա ուշադրութեան արժանի բաներն ուսումնասիրելով, ուսումնասիրում են երեխաներին նոյնպէս, որովհետեւ այդ ճամբորդները գիտեն, որ ժողովրդի հակումները, մշակոյթը (կուլտուրան) և բարոյական դաստիարակութիւնը ամենից լաւ իմացւում են զպրօցներից և աշակերտների վարք ու բարքից: Ահա լսեցէք, թէ ինչ կարծիք է կազմել այդ տեսակ ճամբորդ գիտնականներից մինը, որ հետաքրքրուելով ու առանձնապէս սիրելով մեր քաղաքը մտել է ձեր միջավայրը:

Նա տեսել է հազարաւոր մանուկներ, դպրոցական մեծ շէնքերից դուրս գալիս և «ոչ մի ժամանակ, ասում է նա, ես չը տեսայ, որ այդ մատաղեւրամ բազմութիւնը դէս ու դէն անկարգ վազվզէր աղմուկելով, որ անվայել է բարեկիրթ աշակերտներին: Զարմանալի է, նկատում է յիշեալ ճամբորդը, թէ ինչ լաւ են հասկանում վայելչութեան և բարեկիրթութեան չափը, զգալով միևնոյն ժամանակ հպարտութեան և աշխուժութեան ազատութիւնը ու յորդանալը, Ոչ մի վայրենի աղաղակ, ոչ մի կծու խօսք, ոչ մի բռնութիւն ու անպարկեշտ բան: Ամենևին չեմ տեսել մի գիրք, որ աշակերտի հօր վրայ նստած լինէր իրա օրավարձի արժէքը ու ընկած լինէր փոշու կամ ցեխի մէջ, չեմ տեսել, որ պատուած լինէր մէկի հագուստը, որը կարկատու համար նրա յոգնատանջ, աղքատ մայրը կորցրած լինէր իրա հանգստի ամբողջ ժամը:

Ուրիշ բան էլ, այդ երեխէքը խաղերի և թիւրիմացութիւնների միջոցին բռնութիւն չեն բանացնում, նրանք շատ լաւ հասկանում են, որ խելացի ինքնազսպութիւնը արդարութեան լաւագոյն պաշտպանն է և բաջութեան ապացոյցը: Եթէ նրանց միջի ուժեղներից մէկը մտադրուած է թոյլի դէմ իրա առաւելութիւնը ցոյց տալ, էլ ժամանակ չեն տալիս նրան այդ բանը զլուխ բերելու, մէկի տեղ տասն պաշտպաններ են լոյս ընկնում թոյլի կողքին և ոչինչ այնպէս չի գոհացնում մեր սիրտը, քան ուժի չար գործածութեան դէմ այն անկեղծ զգուանքն ու խոր արհամարհանքը, որ նկատում ես նրանց բորբոքուն գէմբերի վրայ: Իսկ եթէ զայրութի բռնկման կամ անխոհեմութեան պատճառով որևէ մէկը չափազանց մեղանչել է ու դաստիարակը յանկարծ վրայ է հասնում, այդ ժամանակ մարդ ուղղակի հիանում է նրանց խղճի ձայնի կամ դէպի կեղծաւորութիւնն ու ստախօսութիւնն ունեցած ատելութեան վրայ: Յանցաւորն իսկոյն դուրս է գալիս և ասում. «անողը ես եմ», որպէս զի նրա յանցանքը անմեղի վրայ չընկնի: Զեմ կարող ասել թէ քե-

նի հոգի, բայց շատերին տեսել եմ թէ ինչպէս կանգ են առել ձեռք մեկնած կոյրի կամ լաց լինող երեխայի առջև, որ մեկնած ափի մէջ դնեն այն մանր փողերը, որոնցով միտք ունէին խաղալիք կամ այլ բան գնել, սակայն նրանց ձեռները առանց տատանումի բաշխում էին փողերը, հպատակուելով իրանց սրտի ձայնին. «մենք առանց խաղալիքի կը կառավարուենք, միայն թէ դու անհաց չը մնաս»:

Ես ուղեկցում էի նրանց, երբ անցնում էին քաղաքով, նոր շէնքերի միջով, անդրիազարդ հրապարակներով, ծաղկալից պարտէզներով, բայց երբէք չէի նկատում, որ նրանք այնպիսի բան անէին, որ խանգարէր կարգը և հասարակական վայրերի մաքրութիւնը, չէի նկատում, որ նըրանք նուազ յարգանքով վերաբերուէին հայրենիքի բարեբաւերների անդրիններին կամ փչացնէին ծառերը, որոնց ստուերում հանգստանում էին ծերունի ինվալիդը ու յոգնած բանուորը: Նրանք ոտ չէին դիպցնում այն խոտերին ու ծաղիկներին, որոնք իրանց տեսքով ամոքում էին աղքատ պառաւին, ապաքինուող հիւանդին, անտուն մուրացկանին, որովհետեւ այդ ծաղիկների վրայ ամեն միւր նայում էր իւրեւ իրա սեփականութեան վրայ, ընծայ ստացած իրա ծննդավայր քաղաքի կողմից:

Ամեն տեղ, ուր էլ հետևում էի նրանց, մեծ թէ փոքր փողոցներով, միշտ նկատում էի, որ նրանք ծերերին յարգելով ճամբայ են տալիս, յաշմանդամներին հանդիպելիս ակներև ցաւակցում են, վէր ընկած երեխաներին ձեռ էին մեկնում, տխուր յուզարկաւորութիւն տեսնելիս զգականորէ վերցնում էին: Նոյնպէս չէր պատահել երբէք, որ տեսնէի նրանց անասունների հետ անգութ վարուելիս, ինչպէս անում են փչացած երեխաները, Աստծու ստեղծած անբան անասունից էլ ստորանալով:

Այժմ հարցնում եմ ձեզ. միթէ ցնծութիւնից ու հրապարակներից չեն թնդալ ձեր սրտերը, երբ լսէք, որ այսպի-

սի կարծիք կայ կազմած ձեր մասին և որ այդ կարծիքը տարածոււմ է ողջ Իտալիայում ու ամբողջ աշխարհում:

Սակայն իմացէք, որ այս փառաւոր կարծիքի համար դուք զլիաւորապէս պարտական էք դպրոցին: Դպրոցն է սերունդների մտաւոր դայակը, դադափարների առաջին ներշնչողը, դրանք են մարդկանց կերտողն ու ժողովուրդներին վերածնողը: Դպրոցն այն շրջահայեաց դաստիարակն է, որ ընտանիքի անփոյթ թողածը ուղղելով հետզհետէ նախապատրաստում է մեզ կեանքի ծանր բեռը կրելու, ընձեռում է մեզ առաջին բարեկամութիւնները, առաջին օգտակար ձախորդութիւնները, հոգեկան առաջին ցնծութիւնները, որոնք մեզ համար անմոռանալի ու սիրելի են մնում մինչև խորին ծերութիւն: Տայ Աստուած, որ դպրոցը միշտ մնայ մեր լաւագոյն յիշողութիւններից մէկը ու քաղաքացիներին մեր լաւագոյն յիշողութիւններից մէկը ու քաղաքացիներին ազնիւ սնտափառութեան առարկան: Տայ Աստուած, որ նա դառնար եղբայրութեան և սիրոյ իսկական դպրոց, ուր սոցիալական անհաւասարութիւններն անհետանային խելքի մաքուր, ազնիւ մրցման մէջ. այնտեղ հոգիները նախապատրաստուէն կեանքի պայքարի մէջ մտցնել մեծահոգութիւն ու չափաւորութիւն, այնտեղ աղքատ ու հարուստ միակերպ զուարթ նայելով ապագայի վրայ, միատեղ դաստիարակուէին պատրաստ լինելու, աղքատը՝ ներկայ զոհուարակուէին պատրաստ լինելու, աղքատը՝ ներկայ զոհուարակուէին համար, իսկ հարուստը՝ ապագայ, բայց երկուսն էլ սէր տածէին դէպի աշխատանքը-բոտինքը, հոգու մէջ կրէին արդարութիւնը ու վշտանային մարդկային տանջանքները տեսնելիս: Տայ Աստուած, որ դպրոցը դառնար սպառազայ հասարակութեան նախատիպարը, իւրաքանչիւր քաղաքակիրթ ժողովուրդի իդէալը:

Ինձ հարկաւոր չէ լսել ձեր համաձայնութիւնը, որ համոզուեմ, թէ արդեօք դուք էլ մեզ պէս էք մտածում: «Այո, ասում էք դուք, մենք կամենում ենք լինել գործունէայ, զօրեղ և բարի: Կամենում ենք մեզ ազնուաց-

նելով ազնուացնել դպրոցը, պատուով պահել մեր քաղաքի անունը, այնպէս անել, որ մեզ «ճորդի» կանչողը գլուխը հպարտ ու բարձր պահի: Կամենում ենք մտնել հասարակութեան մէջ հոգիներս ազնիւ զգացմունքների շտեմարան շինած: Բարի և գթասիրտ մարդկանց պէս աջ ձեռներս միշտ բաց կը պահենք և սիրալիր կը վերաբերուենք ամեն մէկի, ինչպէս վերաբերում ենք ընկերին կեանքի մէջ: Մենք մեզ բախտաւոր չենք զգալ, երբ ուրիշ մարդկանց տեսներս զըրկանքների ու ձախորդութիւնների մէջ, մեր սրբազան որոշումը կըլինի ամեն տեղ թեթեւացնել չարիքը, որից փնտաւում է մարդկութիւնը: Մենք պատրաստ կըլինենք աշխատել ու կռուել, տանջուել ու մեռնել ոչ թէ անապառուծեան և շնորհակալութիւն լսելու համար, այլ որ անհուն գոհացում պատճառենք մեր խղճին, որպէս զի լսենք նրանից՝ դու խելացի, արդար և բարի ես: Կարձ՝ այս ամենը կանենք այն անհասանելի ձգտումի համար, որ զգանք, թէ մեր մէջ էլ աստուածութեան նշոյլ կայ»:

Այս ամենը կասէք դուք ձեզ ու ձեզ, ձեր հոգու խորքում, ես հաւատացած եմ: Երբ այդպիսի լաւ երեխաներ էք, օրհնուած լինի ձեր նպատակը, զօրանայ ձեր հոգու մէջ ու պայծառ աստղի պէս ճաճանչի ձեր ճակատին, ուր հանգչում է ձեր մօր ջերմ համբոյրը:



3.

**ՏՈՒՐԻՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՅԻ ԱՇԱԿԵՐՏՈՒ-
ՇԻՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԾ ԽՕՍՔԸ:**

Կայ մի բան, քնքոյշ ու հաճելի բոլոր լեզուներում յարգելի ու պաշտելի բոլոր ժողովուրդների մէջ, դա առաջին բանն է, որ հնչում է մանկիկների բերանում, երբ նրանց մէջ զարթում է գիտակցութիւնը և վերջին բանն է, որ երիտասարդն արտասանում է շունչը փչելիս: Մի բառ, որ չափահաս մարդը թէ ձերունին արտասանում են մանկական

քնքշութեամբ կեանքի հանդիսաւոր վայրկեաններին, անգամ շատ տարիներ յետոյ, երբ այդ անուն կրողն այլ ևս չկայ: Մի բառ, որ իրա մէջ ունի խորհրդաւոր զօրութիւն, որ ամեն ինչ առաջնորդում է դէպի բարին, սիրովում ու հովանաւորում է ամենին, մի բառ, որ արտայայտում է այն բոլորը, ինչ որ քնքոյշ, պաշտելի ու սրբազան է: Այդ բառի անունն է մայր:

Դուք բնութիւնից սահմանուած էք ժամանակով այդ անունը կրելու: Իսկ այդ վսեմ պաշտօնը հմտաբար վարելու համար բաւական չէ մենակ բնադղը, բաւական չէ մենակ բարութիւնը, ձեզ անհրաժեշտ է մտաւոր և բարոյական զարգացում: Եւ դպրոցում չկայ այնպիսի բան, որ չընպաստէր դրան: Հաստատ համոզուած եղէք դրա մէջ. ուսէք խորապէս գիտակցելով, թէ բոլոր գիտութիւնները, որոնք ներկայ ըրպէին ձեզ աւելորդ են թւում, որովհետեւ երկար ժամանակ ձեր գլխում ֆնալու են իբրեւ մեռած տառ, սակայն ժամանակով զարթեցնելու են ձեր մէջ այնպիսի հմտութիւններ, որոնք հետզհետեւ զարգանալով ոչ միայն պտուղներ կը տան, այլ դեռ կամրապնդեն ձեր հեղինակութիւնը, ձեր դիրքը և կուժեղացնեն բարիք գործելու կարողութիւնը:

Լսէք թէ ինչ եմ ասում ձեզ. — եթէ լեզուն լուրջ ու մանրազնին ուսումնասիրելը ձեզ յոգնեցնում ու երբեմն էլ ձեր եռանդը պակասցնում է, մի վհատէք, յաղթեցէք ձեր միջի գովամութեան դէպի լեզուն: Նկատի առէք այն, թէ ինչ ահագին նշանակութիւն ունի լեզուին քաջ տիրապետելը. մարդս նրանով կարողանում է արտայայտել հոգեկան տրամադրութիւնը, նոյնը զարթեցնել ուրիշների մէջ, լեզուի միջոցով է, որ կարողանում ենք ուսուցանել, մէկի համոզել, մեր կարծիքը պաշտպանել, մեր սրտի սիրելիներին մխիթարանք ասել, փաղաքշել, խորհուրդներ տալ, լեզուի միջոցով միայն կարող կը լինենք ըմբռնել ու սքանչանալ իմաստութեան ու գիտութեան հրաշալւան զանձեղով, որ մեր անմահ մատենագիրները ժողովել են մտածողութեան և փառքի եօթ դարերի ընթացքում:

Եթէ ձեր միտքը երբեմն դժգոհում է թուանշաններ ուսումնասիրելու դէմ, լաւ մտածեցէք, որ գիտութեան բոլոր ճիւղերում թուաբանութիւնն ինքն ըստ ինքեան այնքան կարեւոր չէ, որքան կարգի ու ճշտապահութեան այն զգացմունքները, որոնք այդ գիտութեան շնորհով զարթում են մեր մտածողութեան մէջ և նոյնպէս մեր կեանքի ամբողջ ընթացքում: Ուշ դարձրէք թէ քանի քանի ընտանիքներում տանտիկնոջ հաշիւ իմանալը, խնայողութիւնը ցոյց է տալիս կանոնաւոր ուղին, ամեն օր թուաբանօրէն համողելով, որ անհրաժեշտ են փոքր զոհողութիւններ, պարտաւորում է անգործութիւնը և ընտանիքն աղքատ վիճակից հանելով հասցնում է ապահով դրութեան, առանց արտասուք թափելու, առանց տանջուելու:

Եթէ ձեզ համար ծանձրալի յոգնեցուցիչ է պատմութեան, ժողովուրդների վաղեմի կեանքի փաստերի անգիր սերտելը, մի վհատուէք, ընդհակառակ մխեցէք ձեր եռանդը, ոչ թէ նրա համար, թէ ով ժողովուրդների պատմութիւնը չըգիտէ, գտնւում է անցեալի ու ապագայի խաւարի մէջտեղը կամ նման է այն մարդուն, որ գիշերը լապտերը ձեռին գնալիս տեսնում է միայն ձամբի աննշան մասը, ոչ թէ նրա համար, որ հայրենիքը ճշմարտապէս սիրել անկարելի է, երբ տեղեակ չէք նրա փառքին, նրա տուած զոհերին, նրա մզած պատերազմներին, այլ նրա համար, որ իմանաք թէ ինչ լայն ու հերոսական տեղ էր գրաւում կիւնն այդ զոհողութիւնների մէջ, այդ կռուի մէջ, որպէսզի դուք մեր նշանաւոր նախնիների կանանցն ու մայրերին սքանչացման ու երախտագիտութեան պարտ ու պատշաճ բաժինը մատուցանելով, նրանց յիշատակն այդ կերպ վեհացնելով, ինքներդ եռանդ և ուժ ձեռ բերէք շարունակելու նրանց սուրբ գործը ազատութեան ու արդարութեան շաւղի վրայ:

Եթէ ձեր համար դժուար է լինում յիշել աշխարհների ձեռն ու սահմանները, տեղերի, քաղաքների, լճերի, գետերի անունները և նկարագիրները. — համբերութեամբ յադթեցէք այդ դժուարութեան, մտածելով որ ձեր աչքերի առջև

այդ կերպով փոռած է ողջ աշխարհը, որի հաղարաւոր կէտերում հետզհետէ ժողովուրդ են բազմատեսակ տեղեկութիւններ զանազան ժամանակների, երկրների և ժողովուրդների մասին: Անօրեայ կեանքի ընթացքում ևս մարդ այդ բաները իմանում է, բայց առանց հիմնաւոր ուսումնասիրութեան մոռացւում է, խառնւում են զլիւի մէջ, ինչպէս անկարգ թուիչները ծիծեռնակների, որոնք ոչ հողի ճուղիք վրայ են հանգստանում, ոչ ծառերի, այլ մի զլուխ ներքև, վերեւ թռւում են:

Վերջապէս ձեզանից նրանք, որոնց ծանր են թւում կանանց ու աղջկերանց համար սահմանուած տնային աշխատանքները, կամ որոնց թւում են անկարեւոր ու անվայել, թող այդպիսիները մտածեն, որ ինչ հասարակական դիրք էլ ունենայ կինը, չը պիտի արհամարհի տնային աշխատանքը, որովհետև որքան բազմ մեզ բարձր դիրքի է արժանացնում, այնքան աւելի պիտի յարգենք ստոր, անհրապոյր աշխատանքը, որ խիստ անհրաժեշտ է և մեր համար կատարւում է ուրիշների ձեռով: Թող այդպիսիները մտածեն այս էլ — ճակագրագիրը գիտէ քմահաճել, ապագան մութ զաղտնիքի պէս բան է, մէկ էլ տեսնում ես ամեն ինչ շուռ եկաւ. փափկասուն կնոջ ձեռները հարկադրուած այնպիսի բան են շինում, որի վրայ առաջ թքել չէր ուզել: Բայց ճարն ինչ. ճակատագրի անհաստատութիւնը բուռն թափով խել է նրա քնքոյշ ձեռներից մատնիքն ու ակնեղէնները:

Ուսէք և աշխատեցէք իբրեւ թէ դուք ամենք սահմանուած էք դաստիարակչուհիներ լինելու: Իսկապէս որ ասենք, դուք բնութիւնից սահմանուած էք դրա համար, որովհետև իւրաքանչիւր կին առաջին և յետին վարժուհին է իրա տան մէջ: Ձեր վրայ դրած ոչ մի պարտականութիւն ստոր մի համարէք, որովհետև այդ բոլոր պարտականութիւնները օգտաւէտ են ձեր խելքի, ձեր սրտերի, զարգացման համար, ժամանակով դուք ինքներդ կարող էք ուրիշ սրտեր, ուրիշ մտքեր դաստիարակել: Դուք պարտաւոր էք կատարել այդ, ինչ դէպքում էլ լինի, թէկուզ բազմը ձեր վրայ քաղցր նայելով

ձեր ծնողներին հասցրած լինէր բարձր դիրքի, մեծ իշխանութեան, փառքի։ Որովհետեւ—այս ճշմարտութիւնը չըմոռանաք—իշխանութեան ու փառքի ծայրին, հասած մարդն անգամ, որ կեանքի ասպարէզում ճաշակել է ամեն տեսակ ձախորդութիւն, հմուտ է մարդկանց հետ վարուելու մէջ և սովոր է նրանց վրայ իշխել ու այնքան գոռոզ է, որ չի ցանկանալ խորհուրդ հարցնել որեւէ մէկի—ասում եմ, այդպիսի մարդն անգամ իրա վիշտն ու թախիծը յայտնում է մօրը, իբրեւ իրա մանկութեան բարեկամի, միշտ նրա խորհրդին է դիմում, բաղդաւորութեան թէ դժբաղդութեան բողբոսներն միշտ մօր խօսքերն ու փաղաքշանքներն է փնտրում։

Բոլորը, ինչ որ ասի ձեզ՝ վերաբերում է դպրոցին, որի սուրբ յարկի տակ գտնւում էք այժմ։ Մի խորհուրդ էլ լըսեցէք այն ժամանակի համար, երբ դպրոցը թողած կը լինէք, երբ նա ձեզ համար կըլինի հաճելի յիշողութիւն։

Թէ գրոյցների մէջ, որ դուք լսելու էք, թէ գրքերի մէջ, որ դուք կարդալու էք և թէ ազնիւ մարդկանց խորհուրդների մէջ, դուք կընկատէք մի բան, որ նրանք աշխատում են ներշնչել ձեզ զգուանք կամ արհամարհանք դէպի աշխարհը, ուղղակի ցանկանում են նուազեցնել ձեր ձգտումը դէպի այն ամենը, որ լաւ ու վսեմ է և սառցնել ձեր յարաբերութիւնը դէպի այն ամենը, որ կոչւում է «կեանքի բանաստեղծութիւն»։ Զգոյշ, չըլինի թէ ենթարկուէք այդ վատ չարախօսութիւններին։ Սրտի ցաւով պիտի ասեմ, որ տղամարդիկ շատ ողորմելի կարծիք ունեն կեանքի և մարդկանց մասին. այդ ամենիս ձեզ չի վերաբերում, որովհետեւ կ'ոջ սուրբ պարտականութիւններից մէկը կայանում է այդ չարիքի դէմ կռուելու մէջ։ Ինչ ասել կուզի, աշխարհս լի է ստեղծութեամբ, անարդարութեամբ և քստմնելի գործերով։ Բայց դրա հետ միասին ինչքան անիրաւացի տառապանքներ ու նեղութիւններ կան, որ մարդիկ ամենայն օր կրում են հաղուապիւս տոկունութեամբ. պիտի իմանաք, թէ ինչքան եռանդ, համբերութիւն և ուժ է սպառւում ամենայն

օր աշխատանքի բոլոր ձիւղերում, ինչքան բարի իղձեր են յուղում մարդկանց ամենայն օր, ինչքան վսեմ առաքիւնութիւններ, ինչքան քարերարութիւններ, ինչքան ազնիւ ու բարի մարդիկ կան աշխարհիս վրայ։ Այդպիսի մարդկանց թիւն այնքան մեծ է, որ մարդ չկայ, որ իրա կեանքում այդ առաքիւնի անձերից մէկին չընանդիպի։ Գուք ևս կը հանդիպէք, միամիտ եղէք։ Կը ճանաչէք այն գործերն ու սրտերը, որոնք ագնուացնում են մարդկային ցեղը և կը ճաշակէք այն զգացմունքը, որ ստիպում է օրհնել կեանքը ու ներումն ինդրել մարդկութիւնից նրա դէմ արած ամբաստանութեան համար։ Ո՛չ, չը հաւատաք նրան, ով կասի ձեզ թէ կեանքի մէջ բանաստեղծութիւն չըկայ, ընդհակառակ՝ կեանքում կայ բանաստեղծութիւն ու կըլինի, քանի որ մանուկի օրօրոցի մօտ կը հնչուի մօր երգը, բանաստեղծութիւն կը լինի, քանի որ ծերերը կը յիշեն իրանց մանկութիւնը նայելով զաւակների ու թոռների վրայ, բանաստեղծութիւն կը լինի, քանի որ կը լինեն հարսնացուներ, որ ձեռի հետ երիտասարդներին կը նուիրեն և իրանց սիրտը, քանի որ կը գտնուեն երիտասարդներ, որոնք ընդունալ կը լինեն մեռնել մի մանուկի կեանք ազատելու կամ մի գաղափար պաշտպանելու համար։ Բանաստեղծութիւնը պիտի ապրի, քանի որ ապրում են բարութիւնը, զթասրտութիւնը, երիտասարդութիւնը, աշխատանքը, գիտութիւնը, գիտութեան յաղթանակը և գեղարուեստի հրաշալիքները, քանի որ մարդկային յոյսերի շուշը գարունը կը ծաղկի և վերելում աստղերը կը շողջողան։

Ի՛նչ, վերադարձէք ձեր պարապմունքներին թարմ ուժերով և սովորական աշխատանքին աւելացրէք մի ուրիշը՝ ամենաարդիւնաւորը—այսինքն՝ ամենայն օր արմատախիլ արէք ձեր հոգու մէջ բաժն ուրումը, փոքրիկ յամառութիւնը, փոքրիկ նախանձը, փոքրիկ գոռոզութիւնը։ Թեթեւ բան է այդ ձեզ համար, քանի որ այդ խոտը մատողաչ է, երբ մե-

ձացաւ, խիստ ծանր կը լինի աշխատանքը: Չանացէք դաշտը մաքրել անպէտք ժախտերից. թողէք միայն գեղեցիկ գաղափարներն ոսկեզօծ հասկերը և ազնիւ զգացմունքներն պայծառ ծաղիկները: Այժմուանից սկսէք ձեր տներում կատարել ամենախորթելի պարտականութիւնը, իբրև ձեր համար բնութիւնից սահմանուած պարտականութիւն, այսինքն՝ զուարճացրէք ձեր յոգնած հօրը, ուրախացրէք վշտի մէջ թաղուած ձեր մայրիկին, պաշտպանեցէք ձեր փոքրիկ եղբորը, թող ձեր ձայնը հնչուի ինչպէս երաժշտութիւն ընտանիքի գործունեայ խաղաղութեան մէջ:

Եւ երբ երեկոյեան մտածմունքներն մէջ առանձնացած դէպ առաջ կը նայէք և կը ցանկանաք ձեր համար երջանիկ երիտասարդութիւն և լուսապայծառ ծերութիւն, այն ժամանակ ձեր աղօթքներն մէջ հայցեցէք, ձեր համար վեհագոյն ցանկութիւն ընդունեցէք այն առաքելութիւնը, որ կարող է տալ ձեզ թէ երջանիկ երիտասարդութիւն և թէ լուսաւոր ծերութիւն—այսինքն՝ խնդրեցէք այն առաքելութիւնը, որին մենք բոլորս, ինչ հասակում էլ լինենք, ինչ սերնդի էլ պատկանենք, ամեն բանից աւելի կարիք ունենք, եթէ կամենում ենք մեզ էլ բարիք անել, ուրիշներին էլ: Այսինքն՝ այսպէս պատասխանեցէք այն մի քանի հասարակ հարցերին, որոնց մէջն է թերևս կեանքի ամբողջ իմաստը—

Նրա ուղին ու ծուծը:

—«Միթէ դու դժբաղդ ես:—Ես քեզ ցաւակից կը լինեմ:

—«Միթէ դու տկար ես:—Ես քեզ կը պահպանեմ:

—«Միթէ դու ինձ վերաւորում ես:—Ես քեզ ներում եմ:

—«Միթէ դու ինձ ասում ես:—Իսկեւ քեզ սիրում եմ:

Գերմ. Թարգմ. Բամալեանց Ս.

ՏՊԱՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՆ ԻՆՋԵՆԵՐՈՅՆ ՆԻԻԹԵՐ

1. Խորերի ստորոժ. վէպիկ.
2. Գոռ գալափա. վէպիկ.
3. Պատմութեան. Կուկունեանց Ս. և այլն.
4. Ծերերի զրոյցներ. Բ. Կապուկ.
5. Ուտիական Նիժի պաթիւնը. Կուկունեանց Ս-ի ու տիւրէն նամակով.
6. Միսկին Բուրջի և այլ աշուղներ (կենսագրականը.)
7. Վարժապետ, օրիգ նահլաթ (յիշատակարան).

ՏՊԱՐԹԱԿԱՆ ԵՆ ԻՆՋԵՆԵՐՈՅՆ ՆԻԻԹԵՐ

Ա. Կրօնի դասագրքեր

- | | |
|--|-------|
| 1. Կրօնի դասատուութիւն ա. բաժ. | 40 կ. |
| 2. Կրօն ա. տ. Առաքին. Յիսուսի կեանքից պատմ. | 20 » |
| 3. Բ. տարի. Նահապետների կեանքից | 30 » |
| 4. Գ. տարի. Մովսէսից մինչև թագաւորութեան բաժանուելը. | 50 » |
| 5. Դ. տարի. Մարգարէներ | 60 » |
| 6. Ե. տարի Յիսուսի կեանքը | 70 » |

Հասցէ՝ Թիֆլիս, Միքայելեան փողոց № 82 բն. № 9.

Բ. ԸՆԹԵՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Ծովինար գ. տպ.	50 կ.
2. Շէն Թադ. աղջիկ. գ. տպ. 12 պատկ.	70 »
3. Երկու աղբէրացեղ բ. տպ.	60 »
4. Աստուած աղքատի կերպում	40 »
5. Հեքիաթներ, Ոսկեծամիկ և այլն	—
6. Երեք խոստովանք և Երեք ոսկի	50 »
7. Անմեռ աշխարհ	15 »
8. Ազգային առակներ	50 »
9. Ծերերի դրոյցներից, պատկերով	30 »
10. Սրտաշահ բաներ	30 »
11. Խղճի դատաստան	10 »
12. Աստուած չը ճանաչող	20 »
13. Գալօ ափօ բ. տպ.	25 »
14. Ժամանակը ոսկի. պատկերներով	80 »
15. «Սիրտ» 9 պատմ. պատկերներով	80 »
16. Քաջ Աղասի	50 »
17. Սասունցի Յովնան	60 »
18. Խուլ Խաչիկ բ. տպ.	50 »
19. Երկասիրութիւններ ա. կասուկ	60 »
20. Փոքրոգի բարեկամներ	15 »
21. Վարդան, Ղևոնդ, պատկերներով	50 »
22. «Սիրտ» նամակներ, պատկերներով	25 »
23. «Վէրք Հայաստանի»-ց գոյարներ	15 »
24. Ոսկեթևիկ, պատկերով	60 »
25. Համբերող Գրիգիղդան	15 »
26. Եզոպոսի կեանքը, պատկերներով	50 »
27. Հայը Յովբի օգուտ, պատկերով	70 »
28. Երեք խօսք, պատկերով	20 »



ԳԻՆՆ Է 20 ԿԱԳ.

<< Ազգային գրադարան



NL0218980

44.432